



ՀԱՅԲԱԹԱԹԵՐԹ

ԱՐԱՐԱԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ


ԹԻԻ 51

ՅՈՒՆԻՍ 30/13 ՅՈՒՆԻՍ 1912

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՃԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ



ԿԱԹՈՂՈՍԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Երկրորդ տարի ։ Յուլիո 30/13 Յուլիո ։ Թիւ 51

ՎԵՇՏԱՍԱՆԴԱՐԵԱՆ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆ

ՄԵԳԻՌՈՒԱՆՈՒ ՀԻՌՎԱՐՏԱԿԻՆ

Արձագանգին մէջ¹ յիշատակած եմք այն գեղեցիկ նամակը զոր Վսեմ. Կարգ. Մէրի տէլ Վալ ներկայ տարւոյ Յունուար 24ին ուղղած էր առ Վսեմ. Կարգ. Բաստէթթա, որ Ս. Բանայապետ Պիոսի Ժ. Ի կողմանէ նախագահ կը կարգուէր այն բարձր Յանձնաժողովին զոր Ս. Պապը կ'անուանէր՝ նախաձեռնարկ ըլլալու համար տօնելու Մեղիողանու Հրովարտակին վեչտասաներորդ հարիւրամեակին տարեւործը (313 — 1913)։ 312 տարին էր, Հոկտեմբերի 27ին, որ Մեծն Կոստանդիանոս Կայսր, դեռեւս հեթանոս, իր միահեծան գաւազանին ներքեւ համախմբելու համար Հռոմէական Պատութիւնը՝ այսինքն է, բովանդակ տիեզերքը, զարհուրելի պայքար մղեց անօրէն բռնակալ

¹ Տե՛ս թիւ 31, էջ 46—47, Տեղեկ. Հոտմ. և թիւ 36, էջ 119։

Մաքսենտիանոսի դէմ, որ բոյն դրած էր Հռոմի մէջ, երբ Կոստանդիանոս կը քալէր դէպի Հռոմ, իրերու պատահականութեան վրայօք իր մտահոգ մէկ վայրկենին՝ օգոյ մէջ չողարձակ երեւցաւ իրեն աստուածատեսիլ Ս. Խաչը, սա մակագրութեամբ. «ԱՅՍ ՆՇԱՆՈՎ ՊԻՏԻ ՅԱՂԹԵՍ»։ Հռոմայ Արեւմ. — Հիւս. կողմի պարիսպներուն ներքեւ, Միլվեան կամուրջի վրայ տարաւ Կոստանդիանոս նշանաւոր յաղթութիւն իւր ոսոխին դէմ, զոր տարին Տիբերիսի ալիքներն։ Յիշին էր որ Միլան քաղաքին մէջ հրատարակել տուաւ Կոստանդիանոս այն երեւելի Հրովարտակը — որ այն քաղաքէն պահած է իր յորջորջումը, — որով քրիստոնէական կրօնից կը պարգեւէր լիւրի ազատութիւն և կը բարձրացնէր զայն ի պատիւ պետական կրօնքի։ Երեք դարերու արիւնքառուչ հաւածանքները, հոյակապ մարտիրոսաց անբաւ բանակը, Քրիստոնեայ եկեղեցւոյ աշխարհիս և մարդկութեան ըրած և խոստացած անգնահատելի բարիքը, արժանացած էին այս բարձրացման. չէր կրնար այլեւս ծածկուիլ քաղաք մը, որ ի վերայ շերտն կայցէ։

Ահա այս երեւելի և ամէն քրիստոնէից համար ուրախառիթ և նշանակալից եղող հնաշխարհիկ դէպքին յիշատակութեանը նախաձեռնութիւնն է որ Ս. Քահանայապետը առած է, յիշեալ բարձր Յանձնաւժողովին ձեռօք. որ ամբողջ աշխարհիս մէջ վայելուչ տօնախմբութիւն մը պատրաստելու համար, ծրագիր — Շրջաբերական գրութիւն մը զրկած է ամէն տեղ, նոյնպէս նաեւ մեղ. և պարտ անձին կը համարիմք անոր գլխաւոր կէտերուն թարգմանութիւնը դնել աստէն, ի գիտութիւն Առաջնորդաց և հաւատացելոց։

Բարձր Յանձնաժողով

ԾՐԱԳԻՐ

Մեր փրկութեան 1913 տարին կը բոլորի տասնութեցերորդ դարն՝ յորմէհետէ եկեղեցին ստացաւ ազատութիւն ու խաղաղութիւն Կոստանդիանոս Կայսրէն հրապարակաւ ի պաշտօնէ և օրէնքով ճանչցուելով թէ՛ Քրիստոսի օրէնքը թէ՛ Քրիստոնէական ընկերութեան պատկանող գլխաւոր իրաւունքները, Քրիստոսի ծննդէնէն Յիշ տարի վերջը։

Այս նշանաւոր դէպքը, զոր կանխեց այն փառաւոր յաղթութիւնն ընդդէմ Մաքսենտիանոսի՝ հռովմէական պարիսպներու չուրջը, զոր տաւ Կոստանդիանոս 27 Հուլ. Յիշին. շատ ծանրակշիռ եղաւ, և ոչ միայն պատմութեան մէջ ամենամեծ նշանակութեան արժանացաւ, այլ կ'արժէ իսկ ամենեւին որ նաեւ մեր օրերուն մէջ մասնաւոր յարգանաց առարկայ հանդիսանայ։

Քանզի աշխարհիս ճակատագիրը վեր ի վայր չըջող այսքան մեծ դէպքի մը հարիւրամեակին տարեդարձին առթիւ ցնծութեամբ լեցուելու են ամէն ազգեր, որոնք Քրիստոսի հաւատքէն ձեռք բերուած պէտք է խոստովանին թէ՛ իրենց ամենէն գերազանց փառքերը, թէ՛ մեծա-

գոյն և բեղմնաւոր յառաջադիմութիւններն՝ բարոյական ու ժամանակաւոր բարեաց մէջ, մանաւանդ այն բաներու մէջ որ մարդկային ընկերութեան քաղաքական զարգացման կը վերաբերին: Իսկ Կաթողիկեայ Ազգեր շատ աւելի մեծ ու մասնաւոր խնդութեամբ հրճուելու են. և գլխաւորապէս Հռոմ. որովհետեւ իբր Աթոռ Յաջորդաց Ս. Պետրոսի, նոր փառապաւկով զարդարուած, շքեղագոյն նախախայրիք՝ հաւատոյ, արդարութեան ու սիրոյ ճառագայթները սփռեց բովանդակ քաղաքակրթեալ տիեզերաց վրայ:...

Երազրին գլխաւոր կէտերն են հետեւեալները.

Ա. Միլիւեան կամուրջին քով, մօտ ի տեղին ուր Կոստանդիանոս Կայսր յաղթեց Մաքսենտիանոսի, Սրբազան Յիշատակարան մը կանգնել, որ յապագայ դարս յիշեցնէ քրիստոնեայ սերնդոց այս փառաւոր գործերը:

Բ. Աշխարհիս չորս կողմը հրաւէրներ ու յորդորներ տարածել որպէս զ՝ հանդիսաւորապէս շնորհակալութիւններ մատուցուն Աստուծոյ, առանձինն շքեղ տօնախմբութիւններ կատարուն. և տպագրութեամբ ի լոյս ածուն գիտական և ժողովրդական երկեր, այս կրօնական և պատմական յիշատակութեան արտասովոր մեծութիւնն ու կարեւորութիւնը ճանչցնելու համար:

Կը հրաւիրուն ուրեմն ամէնքը որ փութկոտութեամբ հոգ տանին իւրաքանչիւր Առաջնորդ Եպիսկոպոսի վարչութեան ներքե տեղական մասնախումբեր կազմել, որոնք յարարերութեան մանեն Հռովմայ բարձրագոյն Յանձնաժողովին հետ. այնպէս որ ամէնքն ամենուստեք համընթանան այսքան փառապանծ դէպք մը պատշաճապէս տօնախմբելու, ինչպէս որ տեղեաց հանգամանացը համաձայն դիպողագոյն երեւի:

Եւ Եկեղեցւոյ այս առաջին յաղթանակին և ազատութեան ու ճշմարիտ խաղաղութեանը՝ զոր Տէրն մեր Յիսուս Քրիստոս Խաչին փառաւոր նշանաւ աշխարհիս պարգեւեց, յիշատակութիւնը մեծապէս բարեպատեհ կը թուի այս մեր ժամանակին մէջ, յորում դժոխոց ոյժերն նոր թափով ճակատ կը յարդարեն Քրիստոսի կրօնքին դէմ, մարդոց միտքերն ու բարքերը չըջնելով միտեցնելով ի դարձ դէպ ի հեթանոսաց աւելորդապաշտութիւնները:

Արդարեւ Քրիստոսի Խաչը այն դրօշն եղաւ՝ որուն ներքե տարածուեցան անխոփոխելի այն վարդապետութիւններն որոնք մարդկային ցեղն ազատագրեցին կռապաշտութեան նախաախնդէն և ստրկութեան բարբարոսութենէն, որոնք մարդկան սուրվեցուցին հարազատ հաւատաբարութիւն ու եղբայրութիւնը, որոնք գերազնիւ առաքելութեան մը բարձրացուցին կէները, վերջապէս որոնցմէ բղխեցաւ Ազգերու այն բարձրացուցին կէները, որոնք Քրիստոսի գերբնական վարդապետութիւններն ընդգրկելով, այնքան դարերէ ի վեր մարդկային Հսկերու-

թեան ապատեանարանը և ճշմարիտ քաղաքական մշակութեան պատ-
նէշը կը կազմեն :

Խաչի յաղթութեան այս հանդիսաւոր յիշատակութիւնը մտղթանք
մը ըլլայ նաեւ որ այս փառաւոր նշանին տակ ամէն մարդիկ միանան
մեզի հետ ճշմարիտ հաւատոյ դաւանութեան մէջ, հոգւոյ Աստուածային
Փրկչին համար բնածին և եռանդնաբորբոք սիրոյ մէջ, և մրանգամայն
ամէնքն ալ եղբայրակից դաշամբ միանան քրիստոնէական սիրոյ մէջ,
որ միակ գրաւական է՝ բարոյական ու ժամանակաւոր բարեաց արգա-
սաւոր դայեակն եղող տեւական իսաղաղութեան :


Ի Հռոմ, 1 Մարտ 1912

Նախագահ

ՄԱՐԻՈՍ ՔԻՃԻ ԻՇԽԱՆ

Ընդհանուր Քարտուղար

ՈՐԱՏ ՄԱՐՈՒՔԻ



ՍՐԲՍԶԱՆ ՔԱՅԱՆՍՅԱՊԵՏԻՆ

ՊԻՍՍԻ Ժ.Ի

ՎԵՐՋԻՆ ՆԱՄԱԿՆ ԱՌ ԱՄԵՆԱՊ. ՅՈԳԵԻՈՐ ՏԷՐ

(Շարունակութիւն)

8. Սրբազան Հայրը շարունակելով իր խօսքը, կը զուգորդէ իր
աւերն ու ցաւը: Ո՛չ ոք երբեք կը տարակուսի թէ Հասարակաց Հայրն
Քրիստոնէից, ընդհանրական Առաջնորդն և Հովիւն հոգւոյ, չսիրէ Հա-
յոց ազգը: Պատմութիւնը ըստ ինքեան վկայ կը հանդիսանայ այս հայ-
րագութ սիրոյն զոր Քահանայապետները տածած են առ Հայս, ինչպէս
Պիոս Ժ. յիշած է իր գեղեցիկ նամակին մէջ առ Հայ Կաթողիկեայս
(Տե՛ս Արձ. Թիւ 29, էջ 1—7), և քանի մը հատին անուններն ալ
թուարկած, որոնք գուրգուրացած են Արեւելքի յառաջադէմ և վա-
ղեմի այս նշանաւոր ազգին վրայ, անկեղծ սիրով՝ քանզի չունին և չեն
կրնար ունենալ ո՛ր և իցէ ակնկալութիւն. զուարթառաս սիրով, քանզի
անդադար բարերարած են հայ ազգին, ամէն կերպով ու ամէն պարա-
գայի մէջ, առատ առատ եկեղեցական, քաղաքական, գիտական ձե-
ռքնտուութեամբ. այս հայրագործով սէրը երբեք չէ նուազած: Բայց ու-
րովհետեւ այս ազնիւ սէրը անոր համար է որովհետեւ հայերը Քրիստոսի
ճշմարիտ հետեւողներ եղած են և իր Փոխանորդին պարտաճանաչ որս

դիք, հետեւաբար այս արծարծուն սիրոյն չափով աւելի մեծ և դառն պիտի ըլլայ ցաւը, երբ տեսնէ որ այս սիրեցեալ որդիք զանցառու և յանցապարտ ըլլան իրենց պարտուցը մէջ. այո՛, դառնապէս կը ցաւի Հայրն ու կ'ողբայ այսքան բազմաթիւ անարժան գործերու, սրբապիղծ դադափարներու, խորհուրդներու և ձեռնարկներու վրայ, զորոնք ի վեր անդր ըստ բաւականի յիշեցինք: Յանցանքին ծանրութենէն զատ, պէտք է մտածել նաև Հօր մը սիրաւ վշտացնելու ամենածանր պարագան:

9. Ստոյգ է որ Հայր մը ամենամեծ բռնութիւն պէտք է ընէ իր սրտին վրայ, պատժելու պատուհասակոծ ընելու համար իր զաւակը զոր սրտանց կը սիրէ. եթէ մարմնաւոր Հօր մը համար այսպէս է, որչա՛փ եւս առաւել պէտք է ըլլայ հոգեւոր հօր մը համար, որ երկնաւոր Հօրը տեղը կը բռնէ աս աշխարհիս վրայ, տեսանելի եղանակաւ: Այո՛, սիրողի մը համար ամենազո՞ւարտին բան է պատժել. բայց որովհետեւ ըսինք թէ Աստուծոյ տեղակալն է, ճիշդ ասոր համար է ահա որ իր վրայ բըռնանալով, սրտին զգացումները խեղդելով, նոյն իսկ գաղտագաղտ արտասուելով իսկ, հարկ անհրաժեշտ է երբեմն որ խստանայ, որ զարնէ, որ պատժէ: Այս իշխանութիւնը ունի Յիսուսէ, որ ըսած է իրեն՝ յանձին Ս. Պետրոսի. «Ի՞նչ որ կապես երկրի վրայ, կապուած պիտի ըլլայ նաեւ երկինքը»: Այս իշխանութիւնը ունի նաև առաքեալներէն. պէտք է յիշել զարհուրելի անէժքն ու պատիժը զոր Պետրոս Առաքեալ տուաւ Անանիայի և Սափիրայի, յանկարծամահ ընելով զիրենք իրարու ետեւէն, ստած ըլլալուն համար Հոգւոյն Սրբոյ. նոյն Առաքելապետը կ'անիծէր նաև զՍիմոն մոգ, զոր իր ազօթքով թաւալելոր վար կը ձգէր օդոյ մէջէն, ուր կը բարձրանար անզգամ հայհոյիչը, և կ'իյնար կտոր կտոր կ'ըլլար, առաջի աչաց Ներոնի: Եւ Պօղոս Առաքեալ կը գոռար. «Լ՛նչպէս կ'ուզեմ. զաւազանով գամ ձեզի». և անուղղայի մը համար կ'ըսէր. «Եւսկիայ մասնեցի սասանայի». և կը խրատէր իր աշակերտը. «Հա՛ս ի վերայ ժամու եւ տարածամու. յանդիմանե՛, սասե՛, որպէս զի չըլլայ քեւեկ վր զեզ արհամարհե՛»: Եւ դեռ հազարաւոր օրինակներ: Արդէն իբրեւ Փոխանորդ Աստուծոյ, պէտք է որ նմանի անոր, որ իբրեւ հայր սիրելով հանդերձ, անուղղաները կը պատժէ սոսկալի կերպով, աստ և ի հանդերձելումն. Ս. Դիրք կենդանի վկայ է իւր աստուածային մեծազայելութեանը քաղցրութեան ու խստութեան: Եւ Յիսուս, մարդոց ամենանեղը, նա՛ որ ջախջախ եղէգը չփչրեց և առկայծեալ պատրոյգը չմարեց, նա՛ որ իր չորս կողմը կը սփռէր գթութիւն և ներում, և կ'անցնէր բարերարելով, Յիսուս՝ որ իր սիրտը օրինակ կուտար խոնարհութեան, հեղութեան և համբերութեան, սակայն և այնպէս անուղղայ անաստօղներուն դէմ անողոքելի էր և իբր առիւծն Յուդայ՝ կը գոռար վայերն ու պատիժները. «Դուք ձեր հայրերուն չափը

ընդունիք. — Դուք իմ խօսքս չեք շնորհակալանքով ընդունել. — Երբեք եղբայրդ լսելով իմ խօսքս, Եկեղեցւոյ ալ չստի, ըրաւ քեզի իրեն հետեւնու ու մտաւոր. — Եւստի պէտք է իրաւախօս ըրաւ, ապա քեզ պիտի մտնուիս դատարանի. եւ դատարանը պիտի մտնեմ գեղ դահլիճի. — Հանձնէ՛ք զինքը ի խաւարն արտաքին, ուր պիտի ըրաւ լաց ու ակումբներու կրօնքով. Դուք՛ք ինձուհի, անթոյններ. — Զեր հայրը ստանալ է. — Թող ուս՛ծ ըրաւ ձեզի ձեր տունն՝ աւերակ»: Եւ դեռ ո՛ր մէկն համարեմ այն ահաւոր սպառնալիցայ ու պատիժներուն զորս հեղահամբայրն, հայրագուծն, ողորմա՛ծ Տէր Յիսուս գոռաց անուղղաներու դէմ... Իր Փառնորդը չկրնար ուրիշ կերպ ընել. ուրիշ կերպ չկրնար գործածել ՓԱԿԱՆԱՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ: Ինչպէս իր պարտականութիւնն է սիրել՝ իրեն զաւակ, ով որ իրեն խօսքերուն, խրատներուն և հրամաններուն կ'անտայ, այսպէս ալ իր պարտականութիւնն է խտուրթիւն գործածել ու պատժել զանոնք որ կը հետեն, որ կը դիմադրեն, որ կ'արհամարհեն: Սա տարբերութեամբ միայն որ, կը սիրէ յօժարակամ, կը պատժէ յակամայ կամ, կը սիրէ ինքնաբերաբար, կը պատժէ ստիպեալ և բռնի. կը սիրէ խնդալով, կը պատժէ լալով:

10. Ս. Քահանայապետը, կարծես պատժելու ունեցած հակակրօնութիւնը յաղթելու համար, առ այս աստիպեալ ըլլալը ցոյց տալէ վերջը, կը թուէ նաեւ այնպիսի պատճառներ, որոնք կը պարտաւորեն իր վրայ այս խտուրթիւնը. քանզի ինքն կը հսկէ, իբրեւ առաջնորդ, հաւատարմութեամբ հոգիներուն համար, որոնց համար հաշիւ պիտի տայ Աստուծոյ. «Ունկնդիր չ'ընտրեմ անոնց ձեռքը եւ հպարտակալ չ'ընտրեմ. զի նոքա չ'ենին վասն ոգւոց ձեռքը, որպէս քեզ համարս տալոց իցեն ընդ ձեռ» (Երբ. ԺԳ. 17): Այս պարտականութիւնը գլխաւորաբար երեք գլուխներու կը վերածէ Սրբազան Հայրը, որոնք մնացեալները բոլոր կը բովանդակեն և այս երեքն ալ կրնան նաեւ բովանդակուիլ մէկ խօսքով. ՊԱՆՊԱՆԵՆԸ ՕՐԷՆԻՔԸ: «Որդի՛ մարդոյ, դէս կացուցի գեղ. — Զգո՛ւշ կացիք անձանց եւ անկեանց հոգի, յորում եղ զձեզ Հոգին Սուրբ տեսչա հովիտը զժողովուրդ Տեսուն. — Պահեա՛ք զաւանդը. — Զհաւատսն պահեցի»: Օրէնքը պահպանելու և պահպանել տալու քահանայապետական պաշտաման պարտուց երբակի մասերն են.

Ա. — Հսկել մեծապէս, որպէս զի Եպիսկոպոսաց իշխանութիւնը անկեղծաբար յարգուի: Եկեղեցւոյ Պետին, իբրեւ այն, առաջին պարագն է ուրեմն, եպիսկոպոսական իշխանութեան պաշտպան կենալ, քանզի այդ իշխանութիւնը յԱստուծոյ է, յերկնաւոր տուջութենէ Հոգւոյն Սրբոյ. «Ահա ԵՍ առաքեմ զձեզ. — Որպէս առաքեաց զիս Հայր, եւ ես առաքեմ զձեզ: Դնացի՛ք, աշակերտեցի՛ք, ուսուցիք. — Որ ձեզ շնէ, ինձ շնէ — եղ Հոգին Սուրբ տեսչա», եւն. : Այս աստուածատուր իշխանութեան վրայ հաստատուած է Ս. Եկեղեցին, ինչ որ ալ բարբառնջեն անհաւատները, ան-

տարբերները, ամբարտաւանները, որոնք Քրիստոսի հետ մաս չունին : Արդ, ուր որ այս երկնածիր իշխանութիւնը յարձակում կրէ, արհամարհուի, անհնազանդութեամբ առաջնորդ կոխուի, հոն պիտի հասնի Քրիստոսի Փոխանորդին ձայնը. եթէ լսելի ըլլայ և հպատակին, կը գրկէ իբրեւ հայր. եթէ հետեւն, կը պատժէ իբրեւ դատաւոր : Աշխարհականներու տրուած չէ դատել, իշխել, տնօրէնել Եպիսկոպոսաց վրայ, անհնազանդութիւն է Եկեղեցւոյ մէջ այս յաւակնութիւնը. և մոլորեալ է այն մարդը որ կը հաստատէ թէ աշխարհականք իշխան են Եկեղեցւոյ վարչութեան մէջ. և եթէ այդպէս է Եկեղեցւոյ մը մէջ, այնու իսկ կնքուեցաւ և վճռուեցաւ որ այն Եկեղեցին մոլորեալ է, չէ մասը Քրիստոսի Ս. Եկեղեցւոյն : Ո՛չ գիտութիւն, ո՛չ յառաջդիմութիւն, ո՛չ քաններորդ կամ հարիւրերորդ դար, ո՛չ մարդկեղէն ոյժ և բռնութիւն. ո՛չ մարդ ո՛չ սատանայ, ո՛չ հրեշտակ կրնան փոխել այս օրէնքը, զոր անյեղի դրաւ հիմնադիրն Եկեղեցւոյ Քրիստոս Տէր, դատաւոր և հովիւ զնիւով Արամ'յն իր առաքեալները. և հնազանդութիւն միայն հրամայելով ոչխարներուն, որոնք պիտի արածուին և ո՛չ թէ արածեն : Պէտք չէ շփոթել սակայն աշխարհական իշխանութենէ շնորհուած պատուանունական տուչութիւնները, որոնք եկեղեցական տեսակէտով բնաւ նշանակութիւն չունին. մանաւանդ իրենց նշանակութիւնը կ'առնուն եկեղեցականութենէ. քանզի այս տուչութիւնք կը շնորհուին միայն եկեղեցական պետի, ինչպէս է մուրախասութիւն, Բաթրիքութիւն, Տեղապահութիւն, ևւն, այս պետերը կը յարգեն և յարգել կուտան կառավարական արդար օրէնքները, միշտ, ամենուրեք, ամենուն. զի «իշխանութիւնը յԱստուծոյ է» : Սակայն այս աշխարհական տուչութեանց համար երբեք եկեղեցական նկարագիրը, պատիւը, կարգն ու իրաւասութիւնը չեն կրնար ոտնակոխուիլ, վարկաբեկ ըլլալ, նշաւակիլ կամ ժողովրդեան քմահաճոյից, բնգունելութեան, դատաստանին ու կամքին ենթարկուիլ, ասիկա կրօնքի դէմ է, կրօնքը աւել կործանել է : Ոյր վասն վիճակի մը հոգեւորապէս և ի հոգեւոր օրինաւոր իշխանութենէ նշանակուած Հոգեւոր Պետը՝ իբրեւ այն մերժել, չընդունիլ, նախատել, վտարել, ամենաւոր Պետը՝ իբրեւ այն մերժել, չընդունիլ, կազմին : Աշխարհական ծանր յանցանքներ են, և հերձուածողութիւն կը կազմեն : Աշխարհական իշխանութիւնը, առանց ստանալիս իրօնքը՝ զոր պաշտպանելու պաշտօնն ունի և իրօք ալ կը պաշտպանէ, չկրնար արգելուլ հոգեւոր պետերու հոգեւոր իշխանութիւնը, որ, գոնէ կաթողիկէ կրօնքին մէջ, բացարձակապէս անկախ է աշխարհականներու նոյն իսկ կղերականներու կամքէն և քմահաճոյքէն : Արդեօք եկեղեցւոյ սուրբ օրէնքները ստանալով ընկուլ, Եկեղեցւոյ Սրբազան Պաշտօնեաները անհնարին անարգանաց և հալածանաց մատնելու յանցանքէն ի՞նչպէս իրեց խիղճը պիտի կարենան ազատել՝ ա՛յն անուամբ կաթողիկեայք, որոնք աշխարհական կառավարութիւնը համոզեցին՝ Սրբազան Քահանայապետին կարգած

եպիսկոպոսները՝ նաև իւրեւ Հոգեւոր Պէս չճանչնալու, անոնց պաշտօնը՝ աշխարհական իշխանութեան հրամանաւ, ժողովրդական կամքէն կախուած ցոյց տալու. մինչև իսկ. — ո՛վ նուաստութեանս — այնպէս կարգադրելու որ եթէ ժողովուրդն ուզէ, եպիսկոպոսը պիտի կարենայ իւրեւ պարզ ֆահանայ մը պաշտօնավարել, ապա թէ ոչ՝ սա մերժուած է իրեն! Եւ կ'ուրախանան իւրեւ թէ յաղթութիւն կանխեցին. կ'ուրախանան զի հոգեւոր հիմն քայքայեցաւ, զի առանձնաշնորհմունք պատրիարքարանիս անհետացան — աշխարհի դիւրութեամբ — կը խնդան, և կաթողիկէայ են... Ով դարձ, ո՛վ բարձ. ո՛ր գրքի մէջ սորվեր են այս իրաւունքը, թո՛ղ ցոյց տան. ո՞րպիտ քրիստոնէութեն, ի՛նչ անօրինակ կաթողիկէութիւն է այդ. «Որդիս ծնայ եւ բարձրացուցի եւ նոբա զիս անարգեցին»: Ահա ի՛նչպիսի անիւղձ, անիրաւ կաթողիկէաներ են զորս կը պատժէ Ս. Քահանայապետը, «Որպէս զի եպիսկոպոսաց իշխանութիւնը ամենուրեք յարգուի»:

Բ. Հովուապետին երկրորդ պարտքն է «Հսկել մեծապէս որպէս զի Եկեղեցւոյ իրաւունքները անբռնաբարելի մնան»: Հայր մըն ալ պէտք կը զգայ իր օրինազանց որդին պատժել, օրինաց իրաւունքը ազատելու համար: Այս պարագայիս մէջ լուիլը, օրինաց պահպանի մը համար քրէական յանցանք կրնայ սեպուիլ: Օրէնքն ընդհանուր է և յաւիտեանական, անձերը՝ մասնաւորներ են և անցաւոր: Իսկ թէ Եկեղեցւոյ իրաւանց զէմ որչափ բաներ կատարուեցան, չենք ուզեր կրկնել. մինչև հիմա ըստածներն ակն յայտնի կ'ապացուցանեն զայս:

Գ. Երրորդ պարտքն է Հովուապետին «Հսկել մեծապէս որ Եկեղեցւոյ միութիւնը քնաւ երբեք չվնասուի»: Քանզի Ս. Եկեղեցւոյ միութիւնը խանգարել կը ճգնին անոնք, որոնց հաճոյ կը քուի դիմել նոյնիսկ բաժանումի ի Հոռովեակիան Եկեղեցւոյ. որոնք կ'անսաստեն իրենց հովիւներուն, և նոյն իսկ Ս. Քահանայապետին խրատներուն, աղաքարութիւններուն, որոնք կ'անարգեն և կը զանցանեն Եկեղեցւոյ ամենասրբազան իրաւունքներն և օրէնքները: Որպէս զի այսպիսի անկարգութիւն մը հաստատուն կերպարանք մը չառնու և տկարները չզայլակղեցնէ, Եկեղեցւոյ գլուխը անսաստող յանցաւորներու զէմ խոտուածեամբ պէտք է վարուի և բաժնէ զանոնք ի հաղորդութենէ սրբութեանց, այս ցանկալի միութիւնը անաղարտ պահպանելու համար: Քանզի եթէ մտիկ լնեն և հնազանդին, իրենք ալ փրկուած կ'ըլլան. իսկ եթէ յարատեւեն իրենց յամառութեան մէջ, գոնէ ազատուած կ'ըլլայ մարմնոյն ամբողջութիւնը: Հետեւաբար անոնք որ այսպիսի գլխած Հօրմէ մը այս տեսակ պատիժներով սաստուելու արժանացած են, ո՞րքան պէտք ունին ուշի ուշով անդրադառնալու իրենց յանցանքին վրայ, և ճանչնալով անոնց ծանրութիւնը, փութով գալու ի զգաստութիւն, եթէ իրաւեցնէ կ'ուզեն մնալ Կաթողիկէ, ի միութեան Կաթողիկէ Ս. Եկեղեցւոյ

և ի հաղորդութեան անոր խորհրդոց, հնազանդ ու անկեղծ որդիք Քրիստոսի Փոխանորդին, և արժանաւոր ժառանգորդներ շնորհաց ու հանդերձեալ փառացն Աստուծոյ: (Շարունակելի)

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵՆԵՐՈՒ ՀԱՒԱՏՔԸ ՈՒ ՏՐԱՊԵՉՈՆԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՄՈՒՏՔԸ¹

Մարգուան

Ուրախութեամբ կը փութամ մխիթարիչ լուրեր հաղորդել ձեզ՝ Տրապեզոնի նորընտիր Եպիսկոպոսին իր թեմը մտնելուն ու Պոնտոսի ընդարձակ երկրին տարբեր քաղաքներուն մէջ անոր ի պատիւ. եղած փառաւոր ընդունելութեանց մասին:

Ինչպէս միւս նորընտիր Եպիսկոպոսներուն իրենց թեմը հասնելու մասին հրատարակուած տեղեկագրութիւնները, նոյնպէս ալ ներկայս պիտի ապացուցանէ թէ, հակառակ Պոլսի մէջ Կաթողիկէներու դէմ ստեղծուած դժուարին կացութեան, և հակառակ գաւառներու մէջ եւս Կաթողիկէ հաւատքին ոտններուն կողմէ եղած դժուարներուն, Հայ Կաթողիկէայք սաւաղել երջան իրենց գոյութիւնը ապացուցանել:

Արհի. Եպիսկոպոսը, զոր անհամբեր կ'սպասէին, կ'ուշանար միշտ գալու Հոռովմէ՝ ուր բռնուած էր իր Հայ Կղերանոցի Մեծաւորութեան ու Ս. Վլաս հիւրանոցի վարիչի հանգամանքովը: Վերջապէս ուրախութեամբ իմացուեցաւ իր Սամսոն հասնիչն, ուսկից հովուական այցելութեան պիտի ելնէր իր թեմին միւս քաղաքներուն ալ: Գալստեան լուրը Սամսոն հասնելուն պէս՝ ամէն ոք սկսաւ պատրաստուիլ արժանի ընդունելութիւն մ'ընելու համար իր նորընտիր Հովուին: Նաւուն հասած օրը ժողովրդապետը, Գալուսին Հարց մեծաւորը, Ֆրէր Մարիսթներու Դպրոցներու Տեսուչը, և մեծամեծներէն շատեր յատուկ նաւակներով ընդառաջ գնացին մինչև չոգենաւ, ուր առաջին կարգի աւարնին մէջ հանդիպեցան Արհի. Եպիսկոպոսին ու պարտուպատշաճ յարգանքը մատուցին անոր. յետոյ, հրաւիրեցին զանի յատուկ նաւակ մը՝ զոր մասնաւորապէս արհեստեան ճսի գորգերով զարդարած էին, քաղաք հասան, ժողովրդապետական եկեղեցւոյն դրան առջև կ'սպասէին խմբովին Վերափոխման կարգի Հայ Կաթողիկէ Քերց դպրոցին սանուհիները՝ որոնք սկսան բարի գալստեան երգ մը գեղգեղել, մինչ զանգակները կը ղօղանչէին ցնծագին: Հոս Արհի. Եպիսկոպոսը զգեստաւորուելով թագով և հովուական գաւազան ի ձեռին եկեղեցին մտաւ ու կարճ ա-

¹ Թէևև այս նիւթիս վրայ արդէն գրեցինք, սակայն այս գեղեցիկ յօդուածը եւրպական թերթէ մը յօժարութեամբ կ'արտատպենք: Ե. Խ.

ղօթքէ մը վերջը, ողջոյնի ջերմագին խօսքեր մը ուղղեց հոն խռնուած ժողովուրդին, ըսելով թէ ինք երջանիկ էր որ այսպէս անոնք հաւա-
տարիմ զգացումներու արտայայտութեան երաշխիքը կու տային հան-
դէպ Կաթողիկէ եկեղեցւոյ և անոր նուիրական գլխուն, զի արդարեւ
Եպիսկոպոսին եղած պատիւը անոնց եղած կը սեպուէր: Եկեղեցւոյ ա-
րարողութենէն վերջ առաջնորդարանի դահլիճը ելան, ուր բոլոր ժո-
ղովուրդը, առանց բացառութեան, նոյն և յաջորդ օրերը եկան իրենց
յարգանքը մատուցանելու իրենց Եպիսկոպոսին:

Ներքին միւս քաղաքները անհամբեր էին սակայն տեսնելով որ
Եպիսկոպոսը կը յապաղէր իր մեկնումը Սամսոնէ. հոն անցուցած տաս-
նուհինգ օրերը անվերջանալի կը թուէր իրենց, ուստի ստիպիչ նամակ-
ներ սկսան տեղացնել մեկնումը փութացնելու համար: Այսպէս ահա,
Սամսոնէ մեկնելով՝ նախ հասաւ Հավղա, որ տեղի փոքրածիւ Կաթո-
ղիկէները մրցմամբ կ'ուզէին հաւասարիլ Սամսոնցիներուն, մանաւանդ
որ հերձուածողներու յօժարախոյթ գործակցութենէն անհամեմատ ըստ-
ուարացած էին թուով: Ասոնք ուրեմն ձիերով եկած էին դիմաւորելու
Եպիսկոպոսը՝ որու ընկերացան մինչև քաղաք այն պանդոկին առջև
ուր պիտի իջնէր ան: Կաթողիկէ գիշերօթիկ վարժարանին աշակերտ-
ները, երգերով քաղաքին մէջտեղէն անցնելով եկան պանդոկ, և հոն
այլեւայլ լեզուով երգեր, ու ճառեր արտասանելով ծաղկեպսակ մը դրին
Եպիսկոպոսին ոտքերուն առջև:

Հավղայի մէջ եղած ընդունելութեանց լուրը ցնցած էր Մար-
գարէանը՝ որ թեմին ամէնէն կարեւոր քաղաքներէն մին է, նոյն իսկ
Կաթողիկէ ժողովուրդին բազմաթիւ ըլլալու տեսակէտիւ, և որ չորս
ժամ միայն հեռու է Հավղայէ: Պատուիրակներ ու հեռագրեր իրար կը
յաջորդէին որոշելու համար իրենց ըղձալի Հովուին հանելու օրն ու
ժամը: Ամբողջ երկրին մէջ թուցիկներ բաժնուած էին՝ որոնց մէջ
կենսագրական ակնարկներով վեր կը հանուէին արժանի ու հմուտ Եպիս-
կոպոսին եղական յատկութիւնները, ժողովուրդը անձկանօք կ'սպասէր
ուրեմն ասոր ժամանումին: Վերջապէս Հավղայէ քաշուած հեռագիր մը
կ'աւետէր օրն ու ժամը, ամբողջ քաղաքը թունդ ելաւ այս լուրին
վրայ: Քաղաքէն մինչև երկու ժամ հեռաւորութեամբ, բազմաթիւ կա-
թողիկէներ կառքերով ու ձիերով, ընդ առաջ ելան իրենց գլուխն ու-
նենալով քահանաներն ու Յիսուսեան Հայրերը: Զանի տեսածնուն պէս,
գերախութենէ արբշիւ ամէնքն ալ վար իջան ու մօտեցան Մատանին
համբուրելու, և յետոյ սկսաւ կազմուիլ յաղթական թափօր մը, որու
առջեւէն կ'երթար Եպիսկոպոսին համար յատկապէս պատրաստուած
կառքը՝ ուր նստեցաւ ինք Յիսուսեան Մեծաւորին հետ միասին, դի-
մացն ունենալով Եպիսկոպոսական քարտուղարը: Մեր Կաթողիկէ ժողո-
վուրդը հաւաքուած էր եկեղեցւոյ առջև: Հազիւ թէ Եպիսկոպոսը ե-

րեւցաւ, Յիսուսեանց Վարժարանի նուագախումբը սկսաւ գոռալ: Գե-
րապայծառը նոյն պահուն եպիսկոպոսական զգեստները հագնելով, քա-
հանայից դասուն ու երգիչներուն հետ միասին թափօր կազմուելով եկե-
ղեցին մտաւ ուր խոնուեցաւ նաև ամբողջ բազմութիւնը այնպէս որ
շարժիլ անկարելի էր: Արհի. եպիսկոպոսը կարճ աղօթքէ մը վերջը բեմ
եղաւ և յուզուած պերճախօս ճառ մը արտասանեց, ըսելով թէ ինք ո՛չ
թէ իր անձնական արժանեաց այլ իր կրած իաչին վրայ սոսկ կը պարծե-
նար, որ խորհրդանիշն էր ճշմարիտ հաւատացելոց ոյժին ու կաթողիկէ
եկեղեցւոյ յաղթանակին: Թէ՛ եպիսկոպոս մը այսօր պէտք էր աւելի
գործնականօրէն անձնաւորէր խաչը, նկատի առնելով պարագայից դժ-
ուարութիւնները, և թէ՛ այս միեւնոյն դժուարութիւնք պէտք են
տեղի տալ այդ միեւնոյն խաղաղութեան ու սիրոյ խորհրդանշին առջև:

Սաչի յաղթանակին յորելեանին եւս ակնարկելով ըսաւ թէ, խաչը
պէտք է սրտապնդէ ճշմարիտ հաւատացեալները, որոնք արդէն աշխարհի
մէջ խաչէն աւելի ապահով բան մը չպիտի գտնեն, զի ան հազարումէկ
ահաբեկ տեսքով կը ներկայանայ մարդուն, միայն քրիստոնէին է որ լու-
սաշող պսակի մը ներքե ի յայտ կու գայ ան՝ վերջնական յաղթութեան
յոյս ներշնչելով: Ունկնդիրներու խանդավառութիւնը աննկարագրելի
եղաւ մանաւանդ՝ երբ աւետեց թէ յաջորդ օրը, կիրակի, Հայրապե-
տական պատարագ մատուցանելով, առաքելական օրհնութիւն պիտի
չնորէր յանուն և ի դիմաց հանուրց քրիստոնէից Հօր Ա. Քահանայա-
պետին Հռովմայ:

Կիրակի օրը ճշմարիտ տօնի օր մը եղաւ. ամբողջ Մարգուան ոտքի
վրայ էր: Արհի. եպիսկոպոսը ծանոյց թէ, քիչ մը հանգիստ առնելէ
վերջ, շարք մը հրապարակախօսութիւններ պիտի ընէր: Հերձուածող
հայ և բողոքականք խուռն գիմեցին լսելու, և ամէնքն ալ ապշելով
բեմքսաց եպիսկոպոսին պերճախօսութեան վրայ, ստիպուեցան գլուխ
ծռել համոզկեր պատճառաբանութեանց առջև: Սօսեցաւ թէ ի՛նչ է ա-
զատութեան ճշգրիտ իմաստը, ի՛նչ պարտաւորութիւն ունի ան ճըշ-
մարտութեան հանդէպ, և թէ ներհալ է որ յանուն ազատութեան յա-
ւէտ ջնջուի Աստուծոյ գաղափարը ընկերութենէն: Առանց բացառու-
թեան ամէնքն ալ խնդակից եղան կաթողիկեայց՝ իրենց եպիսկոպոսին
համար. ըսելով թէ այսքան սովաւաթիւ համայնքի մը բաղդատմամբ
Ան չա՛տ չա՛տ աւելի էր:

Երիտասարդութիւնը մշակուած է Մարգուանի մէջ: մեծա-
մեծ կրթական հաստատութեանց չնորհիւ, բայց կրօնական կրթու-
թիւնը յաւէտ ջնջուած է հերձուածողներու և բողոքականներու
մէջէն: Յիսուսեանց Վարժարանէն դուրս չկայ ուրիշ փրկու-
թեան ելք մը, և իրօք ալ ամէն գովեստէ վեր է վեր. Հարց թա-
փած ճիգը այս մասին: Ընտանեաց հայրերը, որոնք աւանդա-

կան հաւատոյ ժառանգները են, իրական մորմոքով մը ականատես կ'ըլլան իրենց զաւակներուն յարաճուն անհաւատութեան մէջ իյնալը, ուստի, երբ հրապարակապէս լսեցին իրենց լեզուով իսկ կուռ պատճառարանութեամբ խօսուիլը Աստուծոյ, կրօնքի և հաւատքի վրայ, ծայրաստիճան դո՛ւ մնալով, եկան շնորհակալ ըլլալու Եպիսկոպոսին, և խնդրելու՝ որ շարունակէր այսպիսի կրթիչ հրապարակախօսութիւններ ընելու:

Արհի. Եպիսկոպոսը յետոյ անցաւ Ամասիա, ուր յիրաւի յաղթական ընդունելութիւն մը գտաւ, ոչ նուազ Մարգուեանէ, շնորհիւ Յիսուսեանց թափած եռանդին՝ որոնք հոս ալ շատ մը դպրոցներ ունին: Նշանակելի էր մանաւանդ այն հպատակութիւն յայտնող գրութիւնը զոր Ամասիացի Կաթողիկէք ուզեցին անմիջապէս մատուցանել իրենց Հովուին, հոն համեկուն պէս: Յիսուսեանց մեծաւոր Հ. Տէգալէսնէթ անձամբ յանձնեց Արհ. Եպիսկոպոսին սոյն յիշատակագիրը՝ որու մէջ Ամասիացի Կաթողիկէները ցաւ կը յայտնէին եկեղեցական իշխանութեան դէմ Պուլի մէջ եղած դորովելի արարքներուն համար, և կը յայտարարէին իրենց անվերապահ հնազանդութիւնը Եկեղեցւոյ Գլխոյն, ինչպէս նաև իրենց Պատրիարքին և իրենց Եպիսկոպոսին բոլոր հրամաններուն: Շատեր սրբութեան մերձեցան նոյն կիրակին՝ որ Արհի. Եպիսկոպոսը կը պատարագէր: Միեւնոյն ատեն Ն. Գ. պարագային յարմար իր ծանօթ պերճախօսութեամբ քարոզ մ'ըսաւ օրուան Աւետարանին վրայ. իր ճառի նիւթը սա եղաւ թէ, մարգուս բոլոր իղձերը իրենց լիութիւնը միայն Յիսուսի հանդէպ տաճած հաւատքովը կրնային գտնել:

Կէս օրէն վերջ, անխոնջ Հայրապետը հրապարակախօսութիւն մ'ըրսաւ յաւիտենական քաղաքին վրայ, Յիսուսեանց Վարժարանի սրահին մէջ, մոգական լապտերի օժանդակութեամբ: Վերջին պատիերը ցոլացուած պահուն, որ կը ներկայացնէր Պիոս Ժ. Ս. Քահանայապետը Վատիկանեան դարաստաններուն մէջ, ու միանգամայն ատենախոսը կը նկարագրէր Գերագոյն Քահանայապետին անձը իր գլխաւոր գիծերուն մէջ, յանկուրժ խանդավառ ծափերու և ցոյցերու որոտ մը ծայր սուտու սրաաջուխ, և սկսան միաբերան գոչել Կեցցէ՛ Պիոս Ժ.:

Մինչ Ամասիոյ մէջ այսպէս ցնծագին կ'ողջունէին Ս. Քահանայապետն ու Եպիսկոպոսը, Մարգուեան՝ կաթողիկէ ընտանեաց պետերը խճճաբազիր մը կ'ուղղէին յարգանաց, հպատակութեան, գորովոյ և հնազանդութեան Ս. Քահանայապետին Պիոս Ժ. ի և Ամեն. Թերզեան Կաթ. Պատրիարքի, իրենց այսպիսի արժանի Հովիւ մը շնորհած ըլլալուն համար:

Աստուած գիտէ չարին մէջէն անգամ քարիք հանել, որով քաջայոյս ենք թէ, կաթողիկէ հաւատքին թշնամի եղողներու ձեռքով Հայ-Կաթողիկէ Եկեղեցւոյ համար պատրաստուած ճգնաժամային ու դժուար

րին կացութեան, պիտի յաջորդէ կաթողիկէ կեանքի ու գործունէութեան վերագարթնում մը նոյն իսկ այս երկիրներուն մէջ, առ այդ բիւր շնորհակալութիւններ Սատուծոյ, և յետոյ մեր Գերագոյն Քահանայապետին, նախատես հորը հանուր հաւատացելոց ի սիրւոս Ազգաց:

Շ.

ԱՐԴԱՐԱՑԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Մեր Հայ Կաթողիկէ եղբայրներուն հանդէպ պատահած երկպառակութիւնները, որ բաւական ժամանակէ ի վեր կը տիրէ մէջերնին. պատճառը այս է որ լաւ չեն ըմբռնած Կաթողիկէ Կրօնի սկզբունքներն: Իսկ եթէ լաւ ըմբռնած ըլլային և հասկնային իրենց կրօնի ոյժը չպիտի հակառակէին Հոգեւոր Պետի մը որ չորս հարիւր միլիոն կաթողիկեաց կ'իշխէ, չէ թէ միայն հարիւր յիսուն հազար Հայ Կաթողիկեաց: Յիշեալ գաղափարներով սկսան խեղճ ուսմիկ ժողովուրդը համոզել և իրարու դէմ հանել: Իբրեւ թէ Սրբազան Թէրզեան Կաթողիկոսը կը կողոպտէ եղեր զազգային իրաւունքները և կ'ուզէ եղեր մէր վրայէն Հայ բառը Լատինի փոխել. և ուրիշ քանի մը ասոնց նման զրպարտութիւններով, Ուրեմն եղբարք փոխանակ այդպիսի մարդկանց համոզուելու, համոզուինք և խենք Սրբազան Քահանայապետին զոր ինչ կը պատուիրէ մեզ: Վասն զի Ան է մեր կրօնապետը և Ան է միայն որ կաւորող է զմեզ ամէն մի տեսակէտով առաջացնել և յառաջ տանիլ: Ուրեմն եղբարք ձեռք ձեռքի տանք ամենայն սիրով և միաբանութեամբ դիմենք Սրբազան Քահանայապետին և թողութիւն խնդրենք պակասութիւններնուս և գործած յանցանքներնուս զոր ընդդէմ գործեցինք. որպէս զի ան ալ իւր ձեռքէն եկած բարիքները չխնայէ մեզ նման կարօտաւորներուն: Ահա այսպէսով է որ կը փնտռուի ազգային իրաւունքները և յառաջադիմութիւնները, խղճիս դրդմամբ և ազգասիրութեամբ կը յայտնեմ գործած սխալմունքնիս:

ՄԿՐՏԻՉԵԱՆ ԱՄԻՐՆԱՆ

Տարոնացի



Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ո Ռ Վ Մ

* * * Ընդհանուր կաթողիկէութեան Մայր—Եկեղեցին եղող Հռոմայ վատիկանեան բլուրը զարգարող հրաշալեաց հրաշալիք Ս. Պետրոս Եկեղեցւոյն, որու շինութեան քանի մը հարիւր միլիոն ֆր. ծախսուած է, միջին սինաբաթնին քանի մը վիթխարի կիսափունները (pilastres) գաճեայ քնացած էին: Պիոս Ժ. որ յատակին մարմարեայ սալայու տակն ալ նորոգել տուած էր և որ նոր աւարտեցաւ, հրամայեց նաեւ սինեարուն մարմարապատ յօրինուելուն համար հաշուեցուցակ մը պատրաստել: Մասնաւ ժողովը վերջերս ներկայացուց զայն: Երեք միլիոն ֆր. ծախք նախատեսուած է: Կարգ. Բամբոլլա ստանձնած է իր ծախքով շինել առ մեծ դասու սինեներէն մին: Դուրսէն ալ կուգան նպաստներ: Մնացած գումարը պիտի շնորհէ Ս. Քահանայապետը, իսկ Ս. Պետրոս սինեղեանին համար ևս նպաստահաւաքութիւններ կը կատարուին: Կոլումա թերթը միւսոյն առաջին ցանկով մը հաւաքած է 15 հազար ֆր.:

* * * Բորդուկալի դեսպանութիւնը Վաթիկանի մօտ.— Վատիկանի մօտ եղած դեռ պանութեան մասին՝ Բորդուկալի ծերակույտին մէջ տեղի ունեցած վիճաբանութեանց միջոցին, արտաքին գործոց նախարարը պնդած է թէ տղային շահերու պաշտպանութեան համար, զայն չի ջնջելու կուսակից է ինք: Նաեւ աւելցուցած է թէ եթէ Արեւելքի մէջ եւս քահանաներ չանուանուին՝ Բորդուկալցիներու վայելած այժմու տղղեցութիւնը օտարներու ձեռք պիտի անցնի:

«Մեր ոտանները յարած է նախարարը, Յիսուսեան ընկերութեան կը պատկանին [p. 50], անոնք միեւնոյն առին Անդլոյ ևս թշնամիները են, և որոնց երկրը պիտի անցնէին՝ հոն իրենց գործը շարունակելու համար:»

Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Հ


Ընծայաբերութիւն մը.— Վսեմ. Կարդինալ Կիպլինսի միջոցով, որ Ուաշինկթընի կաթողիկէ Համալսարանին դիտապետն է, մեծափարթամ հրեայ մը քսանեւհինգ հազար սուրբի նուիրատուութիւն մ'ըրած է նոյն քաղաքի կաթողիկէ եկեղեցիին: Նուիրատուն՝ որ անունը կ'ուզէ ծածկել, յայտարարեր է թէ ինքն՝ կաթողիկէ, առաքելական ու Հռոմէական Եկեղեցին կը նկատէ Միացեալ Նահանգաց մէջ իբրեւ լաւագոյն մեծ իշխանութիւն և ոյժը որ պայքար կը մղէ ընկերվարականութեան և անիշխանականութեան շարաշար սկզբունքներուն դէմ. և ի նպաստ պահպանութեան օրէնքի ու կարգի ինքն այս նուէրն ըրած է հաստատելու համար վարդապետական աթոռ մը որմէ պիտի դասախօսուի ընկերվարութեան իսկական սուսմանսիրութեան, վերլուծման և հերքումին վրայ: Լէվանց ձեռալս կը դիտէ այս պարագային մէջ. «Այո՛, այս յարգութիւնը անակնկալ է. իսրայէլացի մը որ կը քարոզէ թէ կաթողիկէ, առաքելական ու Հռոմէական Եկեղեցին Միացեալ Նահանգներուն մէջ չոր միտումներու դէմ մտքառող ամենամեծ ոյժն է, անակնկալ յարգանք և որ ընդհանրապէս էր: Քանզի ինչ որ Միացեալ Նահանգաց մէջ ճշմարիտ է, յարգանք է ամէն տեղ: Հռոմայ Եկեղեցին բովանդակ աշխարհիս մէջ է բարին որ կը պայքարի չարին դէմ»:

* * * Կարդինալ Բօփ, որու վրայ կրկին գործողութիւն կատարուեցաւ, տակաւ տաքեցնելու վրայ է: Աւստրիայ կայսրը հեռագիր մը քաշել տուած է անոր շատ մտերմական ոճով, արագ առողջութիւն մաղթելու համար: Վսեմաշուք Կարդինալին հիւանդութիւնը իրապէս առիթ մ'եղած է Դերման և օտար երկիրներու վեհապետներուն և բարձրատիման անձերու՝ ցոյց տալու համար թէ ո՛րքան թանկագին է յոյս իրենց Կարդինալ Բօփի անձը, և ո՛րքան ալ սիրուած:

* * * Լիօնի Արքեպիսկոպոսը, Կարգ. Դուլիէ, տունէն մ'իվեր ծանր փողատապէ [bronchite] կը տառապէր, բայց իր տարիքին շատ յառաջացած ըլլալէն մեծ մասհոգութիւն

կը պատճառէր իր վիճակը: Կօլուայի ըսածին նայելով, հիւանդութիւնը բարւոքելու միտեալ է: Պատկառելի հիւանդին վերջերս Պիոս Ժ. ուղղած է ինքնագիր նամակ մը. որու մէջ Ս. Քահանայապետը կը շնորհաւորէ զանի Վերջին օծման խորհրդոյն հանգէպ իր ունեցած ջերմեռանդութեան և հաւատքին մասին. և յոյս կը յայտնէ թէ ի մօտոյ պիտի կարենայ վերստին գտնել իր առողջութիւնը:

Ս. Քահանայապետին այս նամակը բուն ուրախութիւն պատճառած է Ծիրանաւոր Արքեպիսկոպոսին:



ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Ամեն. Գերերջանիկ Հոգ. Տիրոջ հրամանաւ, եկեղեցական տարրողութիւնները Աթոռանիստ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ ևս սկսան նոր մէկ շրջանի մը մէջ մտնել: Այժմ տմէն կիրակի երեկոյ, եւր. ժամը 4ին կը կատարուի երեկոյան ժամերգութիւն, յետոյ Ս. Կսէսին Վարդարանը գոբգուելով Ս. Հաղորդութեան օրհնութիւն կը տրուի:

* * Մայրաքաղաքիս Հայ Կաթողիկէ վարժարաններու քննութիւններն աւարտելով, արձակուրդ տրուեցաւ: Անարատ Յղութեան Քերց Բերայի, Բանկալթիի, Բաղկեդանի և Սամաթիոյ Աղջկանց վարժարաններն ալ իրենց ամսվերջի քննութիւններն աւարտեցին, բայց ուրիշ տարիներու նման չկրցան հանգիստաւ մրցանակաբաշխութիւն կատարել: Քննութեանց պահուն մասնաւոր գնահատութեան արժանացան Բերայի շրջանաւարտ օտա նուհիք, ինչպէս նաև Բանկալթի թուրքերէնի հետեւող աշակերտուհիները:

* * Մայրաքաղաքս հասան Վենետիկոյ միաթարեան Միաբանութեան անդամներէն շատեր, ընտ որս, Հայր Վարդան Հացունի, և Հ. Թէոփար Սիրունեան, օր 7 տարի շարունակ Պարտիզոնի մէջ աշխատած էր թէ՛ իրը հոգաբարձու և թէ՛ իրը ժողովրդապետ, իսկ վերջերս Բատուայի կալուածներուն վրայ դրուած էր: Այժմ իր պաշտօնը Պոլիս տրուած է Սեղրոս խանի գրասենյակին մէջը ուղղելու համար:



Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Մանասիրէն կը հեռագրեն թէ գասալիք սպաները ու զինուորները պըզտիկ խումբերու բաժնուած դէպ ի Կօրիձա կը քալեն: Մանասիրի բանակէն երեք ջոկատ զինուոր զրկուած է զանոնք հայածելու համար:

* * Սալիօվոյի շուրջ համախմբուած Ալպանացիները 3 սպայ և 15 զինուոր գերի բռնեցին: զանոնք զինաթափ ըրին և առաջնորդեցին իփէքի շրջանի յեղափոխական գունդին ընդհ. հրամանատարին մօտ:

* * Զինուորականներուն քաղաքականութեամբ զբաղիլը օրինագիծը վաւերացուելէն անմիջապէս ետք, քաղաքային պաշտօններու վրայ գտնուող բոլոր զինուորացիները ետ պիտի կանչուին:

* * Ելիսական նախարարութիւնը որոշեց եօթը պաշտօնեաներ զրկել Ֆրանսիայի ֆրանսական ելմտական նախարարութեան մէջ պաշտօնավարելով՝ կատարելագործուելու համար:

* * Սիսի-Սաիսի կոիւր. Իտալական Միսանճիոն թերթին Տրիպոլիսէն կը գրեն թէ Սիտի-Սայիտի վերջին կռիւին մէջ թուրքերը 1500 մահ և 3000 վերաւոր ունեցան: Առաջնեւէն քանի մը հարիւր գերի ինկան, որով այս պատերազմին մէջ թուրքերն ու Արաբները 5000 կորուստ ունին:

* * Նախարարական Տաղմապ. Պոսէն Վիեննական թերթի մը գրեն թէ Սայիտ փաշայի դահլիճին հրաժարիլը հաւանական կը նկատուի: Բանակին շարժումը կատեցնելու համար դահլիճին փոփոխութիւնը անհրաժեշտ համարուած է:


* * Թալիզի թղթակիցը Պոսէն կը հեռագրէ Յունիս 30 թուականով. — Մանասա գրէն հասած հաւատարի լուրերու նայելով, մինչև Յունիս 26, 22 սպայ և 270էն 300 զին

ւոր ապստամբութեան Մանասղընէն և Տէպրէէն տառնեակու երեւելի Ալպանացիներ 140 զինուած հետեւորդներով միացան դասալիքներուն: Հրացանաձիգներու վաշտ մը հրաման տուացաւ դասալիքներուն գէմ երթալ, բայց Ձէքի փաշա հրամայեց որ կռուէ խուսափին: Մանասղընի մէջ Ձէքի փաշա խօսեցաւ ճառ մը, որուն լուսթեամբ մտիկ ըրին: Նաֆիստ պէյ, որ ծպտեալ դասալիքներուն միանալ կը փորձէր և զոր ձերբակալելու միջոցներ ձեռք առնուեցան, Ալպանացի է ու եղբայրը՝ Պերլինի Օսմ. գեսպտեստան զինուորական կցորդին:

* * * Իթթիհատի կուսակցութիւնը համամտութիւն յայտնած է նէմէնի առանձնաշնորհութիւն տալու իմամ Եահեայի պահանջմանց համաձայն ըստ ամենայնի:

* * * Կառավարութիւնը խոստացած է 250 ոսկի տալ Եանեայի հաշակաւոր աւագաններէն ֆօթէճին ողջ կամ մեռած ձերբակալողին, 150 ոսկի՝ Բարթան Ֆուրթունայի, 100 ոսկի՝ Ջարբատի և Գըթըպ հրոստիմբերու ձերբակալումը գիւրացնողներու: Նոյնպէս ո՛ր և է հրոսակ երբ իր պետը սպաննէ՝ կառավարական հետապնդումէ զերծ պիտի ըլլայ: Լրատուներու թէ՛ դրամական պարգև պիտի տրուի և թէ անունին գաղտնի պիտի պահուի:

* * * Երկրագործական արժանիք Անուշով նոր պատուանշան մը հաստատուեցաւ, որ յատկացած է թուրքիոյ մէջ երկրագործութեան զարգացման նպատառներուն: Նոր պատուանշանը երեք սատիճան ունի:



Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն Լ Ո Ւ Բ Ե Բ

Երկու Ռուս սպաններու ձերբակալման վրայ Լճգալ Անճայիլը կը գրէ.— «Վերջին տեղեկութեանց համաձայն հարևարապետ Բօսթէվիչ և տեղակալ Միքօլէսքի շատ ծանրաւ կշիռ կացութեան մը մէջ կը գտնուին, այս վերջինին վրայ ծանրացող ամբաստանութիւնները իւրեւ մեղսակից շատ ջախջախիչ են: Հարևարապետ Բօսթէվիչ ջանացեր է ձեռք անցունել խորտնկեցներու և Գերմանական թնդանօթներու յատակաձեւերը: Լուր կայ թէ ուրիշ Ռուս սպաններ ևս պիտի ձերբակալուին»:

Պերլինէր Թակէպլար կը ծանուցանէ թէ՛ Պերլինի զին. կցորդ գնդապետ Պազարօֆ հեռագրաւ Բեդերապուրի կանչուած է այս խնդրոյն մասին իր տեղեկագիրը ներկայացնելու՝ համար:

* * * Սերայիա Մակեդոնիոյ Սերպերուն գէնք արամադրելի ըրած է Պուլկար ատրքին գէմ մարտուելու համար: Այդ նպատակաւ Սըուփչինան 500,000 ֆր. տուած է Արտաքին Գործոց նախարարութեան, ու 21 միլիոնի վարկ մըն ալ քուէարկած զանազան զինուորական պետքեր հայթայթելու համար:

* * * Վիլիէլմ Կայսեր տեսակցութիւնը Ռուսիոյ Ջարին հետ. մեծ յոյսեր կը ներշնչէ Պուլկարներուն, զի կը կարծեն թէ Պալգանի կացութեան մասին ալ անոնք կարգադրուածին մը պիտի ընեն:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Մեսիսլանու. Հրովարսակը	353
Ս. Քահանայապետի նամակը	356
Արհի. Նազիւան Եպիսկոպոս	361
Յայտարարութիւն մը	365
Տեղեկագրականք	366

ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՅՈՒՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԻՄՐԱԿՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Օսմանեան Գործակցական Ընկ. Էպուստուոս Եասէսի Նօ. 27

I have been thinking of you very much lately
and wondering how you are getting on. I hope
you are well and happy. I have been very busy
with my work, but I always find time to think
of my friends. I am sure you are doing
just as well as ever.

I am sure you are doing
just as well as ever. I am
very busy with my work, but
I always find time to think
of my friends. I am sure
you are doing just as well
as ever.

I am sure you are doing
just as well as ever. I am
very busy with my work, but
I always find time to think
of my friends. I am sure
you are doing just as well
as ever.

I am sure you are doing
just as well as ever. I am
very busy with my work, but
I always find time to think
of my friends. I am sure
you are doing just as well
as ever.

I am sure you are doing
just as well as ever. I am
very busy with my work, but
I always find time to think
of my friends. I am sure
you are doing just as well
as ever.

«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ» . Հայ Կաթողիկէ ի Պատրիարքարան պատշտական Շաբաթաբերքը, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծագիր էջերէ բաղկացած եւ նոյն բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին մը, որ կը պարունակէ կարեւոր եւ ասոյց ամէն յուրերն՝ համառօտուած . որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաբերք կարդալու :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Թուրքիոյ համար

Տարեկան Դնէկ . արծ. 40

Վեցամսեայ » » 20

Արաստահման

Տարեկան Ֆրանկ 10

Վեցամսեայ » 5

Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին Մանսա-Քոստով եւ կամ մէյ մէկ դրոցոց նամակադրութեամբ :

Մէկ թիւ 1 Դահեկան



Նամակ , յօդուած , եւն. կը դրկուին խմբագրութեան հասցէին.

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց

Բերա

Կ. Պոլիս

Katoghighe Arzakank

Patriarcat Catholique

Péra

Constantinople

- ԾԱՆՕԹ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի շաբաթ օրերը:
2.— Խմբագրութիւնս պատշաճութեամբ չէ անպատշաճ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն դրկուած ո եւ է յօդուած:
3.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:
4.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուրքի մէկ կողմը միայն:
5.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին: